2· Խալեադի լեռնահովիտը, որ Ալաշկերտի ութ ժամ յարեւմուտս բարձր դիրք ունի։

3· Ցետըկան հայ գիւղն որ Խալեադի արեւելեան ստորոտն, դաշտի արեւմտեան եզրն է, կը տարածուի մինչեւ Չաթ։

4· Մօլլա-Սիւլէյման հայ գիւղն եւ Դօփուզայ թեւ որ Սուկաւէտի շուրջն պատած գիւղօրայք են։

5· Խաչլու հայ գիւղն, եւ Խաչլուայ թեւ, որ կը տարածուի մինչեւ Բօզ-թեփէ· Մանակներ եւ Կալցի Ջրի միջավայրն։

6· Ամատ եւ Ամատայ թեւ, որ կը տարածուի ի հիւսիս մինչեւ Աղ-բուլաղ լեռ։

7· Աշխալի հայ եւ քրդ· խառն գիւղն մերձ Գարա-քիլիսէի։

8· Մերկեզեր Աշխալի գիւղի հիւսիսէն մինչեւ Չամչա տարածուած 15 ի չափ քրդ· գիւղօրայք, որ քանի ձորակներու մէջ կան։

9· Շեռեանայ գլուխ որ դաշտիս արեւմտեան հարաւն Խալեադի յարեւելս եւ Ցետկան գիւղի հարաւն մի խումբ քրդ· գիւղօրայք են։

10· Խասատուր հայ գիւղն, որ Շեռեանայ գլխոյ ստորին կողմն կը գտնուի, Շեռեանայ ձախ ափին վերայ։

11· Շեռեան գետոյն աջ ափն կամ Դլիճ եւ Կեառէ կեառուկի հիւսիսային կողերն որ է Շեռեանայ գլխէն մինչեւ Ջատօ գիւղն, ուր կայ Մուրատ։

12· Շեռեան գետոյն ձախ ափը Խասատուր գիւղէն մինչեւ Գարա-քիլիսա։

13· Դայաբէկ հայ գիւղով մինչեւ Գարա-քիլիսայ։

14։ Եննի Թափա (բլուր) հայ գիւղով մինչեւ Գարա-քիլիսայ։